

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/5

12 փետրվարի 2013թ.

Քննարկվեց «Հրաշք-Գլորու» ՍՊԸ 01.02.2013 թ-ի դիմում-բողոքը «ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 27.12.2012 թ. թիվ 2113685 ստուգման ակտի դեմ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի 08.12.2012թ. թիվ 2113685 հանձնարարագրի «Հրաշք-Գլորու» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը «Օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում, որն ընդգրկել է 29.08.2008թ-ից մինչև 17.12.2012 թ. ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 27.12.2012 թ-ին կազմվել է թիվ 2113685 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 60.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

«Հրաշք-Գլորու» ՍՊԸ-ին պատկանող մանկական հանդիսությունների կազմակերպման սրահում գործունեություն էր իրականացնում թվով 1 (մեկ) վարձու աշխատող, որի հետ կնքված չէր գրավոր աշխատանքային պայմանագիր և բացակայում էր օրենքով սահմանված իրավական ակտը, որով խախտվել է «Աշխատանքային օրենսգրքի 84-րդ և 85-րդ հոդվածների պահանջները:

Համաձայն «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» «Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի, ստուգման ակտով լրացուցիչ գանձման է առաջադրվել 60.000 դրամ:

«Հրաշք-Գլորու» ՍՊԸ բողոքում մասնավորապես նշված է.

2013 թ-ի հունվարի 8-ին Կոտայքի ՏՀՏ-ից ստացա «Հրաշք-Գլորու» ՍՊԸ-ի վերաբերյալ կազմված ստուգման ակտը, որի վերաբերյալ հայտնում եմ իմ բողոքը, քանի որ ստուգման արդյունքները ստացվել են խարդալանքի և կեղծիքի ճանապարհով: Մասնավորապես, 2012 թ-ի դեկտեմբերի 14-ին, ժամը 18:00-ի սահմաններում հարկային տեսչության տեսուչներն այցելել են «Հրաշք-Գլորու» ՍՊԸ՝ ցանկանալով դեկտեմբերի 31-ին նշել երեխայի ծննդյան օրը: Ընկերության աշխատակից Արևիկ Մաթևոսյանը ծանոթացրել է պայմաններին, որից հետո կանչել են ինձ: Չնայած ուշ ժամին ես եկա ընկերուհու հետ: Տեսուչները ներկայացան և հայտնեցին, որ կատարում են հերթական ստուգումները:

Բոլոր փաստաթղթերը նայելով և ոչ մի թերություն չգտնելով, տեսուչներն առաջարկեցին ձևի համար գրել մի հայտարարություն և կցել գործին: Տեսուչների թելադրանքով գրեցի հայտարարությունը, բայց հետո պատռեցի այն, չէ որ ես աշխատող չեմ: Տեսուչները լրացրեցին մի արձանագրություն, որ ես ունեմ մեկ վարձու աշխատող: Ես ստորագրեցի, սակայն չպատճենահանեցի այն, քանի որ նախ հարմար չէր, և հետո չէի մտածում հնարավոր հետևանքների մասին: Մասնավորապես, չէի նկատել, որ տեսուչներն աննկատ իրենց հետ տարել էին պատռած հայտարարությունը, որը հետագայում վերակենդանացնում են, դատարկ տողերում ավելացնում են իմ անունը և ազգանունը մոռանալով, որ ես հիմնադիր եմ և այդպիսի արձանագրության տակ երբեք չէի ստորագրի:

Ելնելով վերոգրյալից դիմումատուն խնդրում է հարցին տալ դրական լուծում:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի և ստուգման իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ ընկերության դիմում-բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

<Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> « օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. <Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու դեպքում գործատուն տվյալ (արձանագրման) ամսում հաշվարկում և վճարում է այդ (չձևակերպված) վարձու աշխատողի համար սոցիալական վճար՝ 60.000 դրամի չափով>:

<Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին> « օրենքի 12-րդ հոդվածի համաձայն. <Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն՝

ա) սույն օրենքով կամ ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել ընկերության կառավարմանը.>:

Քննարկվող դեպքում ստուգման ակտով որպես « օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպված վարձու աշխատող է դիտվել ընկերության մասնակից՝ Սվետլանա Դանիելյանը, այն դեպքում, երբ վերջինս ընդամենը օգտվել է <Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին> « օրենքի 12-րդ հոդվածով իրեն վերապահված իրավունքից: Մասնավորապես, քննարկման ընթացքում պարզվեց, որ Սվետլանա Դանիելյանն իր գործողություններով, ըստ էության, ընդամենը մասնակցել է ընկերության կառավարմանը:

Քննարկման ընթացքում ընկերության մասնակից Սվետլանա Դանիելյանի կողմից ընկերությունում վարձու աշխատողի գործունեություն իրականացնելու վերաբերյալ բավարար ապացույցներ չներկայացվեցին:

Վերոգրյալից ելնելով Հանձնաժողովը եզրակացնում է, որ <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> « օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պատասխանատվության միջոցը քննարկվող դեպքում կիրառելի չէ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» « օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել « ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՏՏ 27.12.2012թ. թիվ 2113685 ստուգման ակտի 1-ին կետը:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ